

նը չէին զիջեր ոչ միայն խորհրդի եւ Տիգրանակերտի նահանգներուն եւ այլ քաղաքներու, այլ նաեւ Փոքր Ասիոյ եւ Հայաստանի որեւէ քաղաքի մէջ մշակուած կաշիներուն:

Փաստ է դարձեալ, որ չնքուչիներ ընդհանրապէս արհեստաւորներ էին: Այդ արհեստաւորներու 2/3ը — բացարձակ մեծամասնութեամբ կաշեգործներ — տարւոյն 7-8 ամիսները կը գործէին ո՛չ միայն Չնքուչին կէս օրէն մինչեւ մէկ օր հեռաւորութեամբ զիւղերու եւ աւաններու մէջ, այլ եւ խորհրդ ու Տիգրանակերտ նահանգներու բազմաթիւ քաղաքներուն ու զիւղերուն մէջ, որոնք հետիոտն կամ զրաւտի ճանապարհով Չնքուչին 2-3 օրուան հեռաւորութիւն ունէին: Այնպէս այլ արհեստաւորները կը վերադառնային իրենց ծննդավայրը, իրենց 7-8 ամսուան վատակին արդիւնքը կը սպառէին ընտանիքին տարեկան ուտեստեղէնի պաշարին (ապրցու), առօրեայ պիտոյքներուն, խրախճանքներու եւ ազգային-եկեղեցական պարտաւորութեանց վրայ՝ ձմրան եղանակի 4-5 ամիսներուն, եւ դարձան, յետ Զատիկի առաջին շաբթուն, կրկին կը մեկնէին իրենց աշխատատեղիները...

Չնքուչ հնուց ի վեր ունեցած է միատարր ՀԱՅ բնակչութիւն: Ժ.Վ. դարու կէսէն ետքն է, որ թուրք կառավարութիւնը, հինգէրիներու միջոցաւ, փորձած է թուրքեր, կամ մասմեռականներ տեղաւորել Չնքուչի մէջ. (թէ եւ անոնք երբեք յաջողած չեն դառնալ մեծամասնութիւն: Ըսենք իսկոյն, թէ մինչեւ 1915 Չնքուչի 1500 տուններէն միայն 300ը մասմեռական էին, իսկ մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Ատիշ զիւղին 300 տուններէն միայն 3ը մասմեռական էին): Թէ՛ Անիշ-խանութեան (ԺԱ-ԺԵ. դար, Սելճուկ-Մոնղոլ-Իւլգէկ-Թաթար արշաւանքներու) դարաշրջանին եւ թէ՛ թրքական տիրապետութեան օրով, մինչեւ ԺԹ. դար Չնքուչ ունէր կիսանկախ վարչական գրութիւն մը՝ Պէյլիկ (Պէյութիւն)³: Բնականօրէն մեր արհեստաւոր նախահայրերը Չնքուչի հաճոյալի, մանաւանդ ազատ

կենցաղը կը նախընտրէին իրենց աշխատատեղիներու քայայի կենցաղէն:

Ամենայն հաւանականութեամբ, ԺԱ. դարու վերջերը Անիէն գաղթող խումբ մը հայերու կողմէ Բնարեղ-բնակչի աւերակներուն վրայ Շէնդեղ (Չնքուչ)ը հիմնուելէն⁴ ի վեր, Չնքուչիներու սպրեւորակերպի այս գրութիւնը շարունակուած է մինչեւ ԺԹ. դար, անընդհատ:

ԺԹ. դարու առաջին կիսուն, երբ թուրք կեդրոնական կառավարութիւնը վերջ տուաւ Չնքուչի Պէյութեան, սկսան կանոնաւոր հալածանքն ու հարստահարութիւնները տեղւոյն հայութեան դէմ, եւ Չնքուչի բազմադարեւ աւերի հաճելի ու ազատ կենցաղը սկսաւ վատթարանալ ու դառնալ, այն ատենէն սկսեալ, ահա, այն արհեստաւորները, որոնք արդէն իրենց ընտանիքին սպրուստը չէին ճարեր Չնքուչի մէջ, գաղթեցին այն վայրերը, ուր իրենք եւ իրենց նախահայրերը դարձան ճարած էին իրենց սպրուստը՝ ճակտի քրտինքով:

Անժխտելի, անհերքելի իրողութիւն մըն է, որ ԺԹ. դարուն, ըսենք մինչեւ 1900ական թուականները, մօտաւորապէս 500 չնքուչի ընտանիքներ գաղթած եւ հաստատուած են Երրոյ (Քաֆարաէղ, Իւմիւրիւն, Մամաշ, Մարվաթոյ եւ այլ զիւղեր), Կարկառի զիւղերը, Մալաթիա, Սարրերդ, Սեւերակ, Արդնի-Մատան, Տիգրանակերտ եւ այլ վայրեր, որոնք ունին 2-3 օրուան հեռաւորութիւն Չնքուչին: Այդ վայրերու մէջ հաստատուող չնքուչիներու թիւն երբեք ու թոռնորդիներն անդամ մինչեւ այսօր չնքուչի կը ճանչցուին եւ կը յորձորձուին տեղացիներու կողմէ:

* * *

Վերադարձ ընդունող չնքուչիները կրնան վկայել, որ Չնքուչի մէջ ո՛չ միայն կա-

3. Տեսնել Շ. Ինճիճեանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ասիա» եւ մեր աշխատասիրած «Չնքուչապատում»-ը, որ մօտ օրէն լոյս պիտի տեսնէ:

4. Դարձեալ տեսնել Չնքուչապատումի պատկան զլուխները:

շեղործութիւնը, մասնաւորապէս խաղախորդութիւնը (կաշի մշակելու, հասցնելու — չնքուչիական բարբառով — արհեստը) չափազանց զարգացած էր եւ արդիական մեթոտներով առաջ կը տարուէր, այլ նաեւ Չնքուչի խաղախորդարանները (տապախանա), եկեղեցիէն վերջ եւ եկեղեցիին կառուցուածքին համալոյս, հաստատուն եւ զիմացկուն չնքեր էին, լայնադիր պատերով, խոշոր որձաքարերով, մարմարիտներով շինուած դարաւոր կառույցներ:

Այս կը նշանակէ, թէ պարզ եւ հասարակ արհեստի մը պէս չէին նայած չնքուչիներ խաղախորդութեան կամ կաշեգործութեան վրայ, այլ վերաբերուած էին անոր հետ որպէս իւրայատուկ ճարտարութեան, եւ Չնքուչը դարձուցած էին անոր կեդրոնը: Մեր կաշիի վաճառականները — որոնք պատկառելի թիւ մը կը կազմէին եւ ամէնքն ալ աղբիւրի, յարկուած, հին գերդաստաններու գաւակներ — կը ճամբորդէին մինչեւ հեռուոր Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Մոնղոլիա եւ ցամաքային ու նաւային երկաւրտեւ ուղեւորութիւններով կը բերէին հում ու կարծր կաշիներ, ամէնէն արդիական մեթոտներով կը մշակէին զանոնք Չնքուչի խաղախորդարաններուն մէջ եւ ո՛չ միայն զանոնք մեծաքանակ կը վաճառէին խորհրդի ու Տիգրանակերտի քաղաքներու տեղական վաճառականներուն, այլ այդ նահանգներու սահմաններէն ալ հեռու — Միջագետքի, Կապադովքի եւ Կիլիկիոյ վաճառաչահ կեդրոններուն մէջ, Ուրֆայ, Հալէպ, Դամասկոս, Ատանա, Այնթապ, Մարաշ, Տրապիզոն, Եւրն, Եւլն:

* * *

Կաշեգործութիւնը հիշ Հայաստանի զարգացած արհեստներէն մին էր: Հայաստանի մէջ մշակուած կաշիներն ու պատրաստուած կաշուեղէններն ո՛չ միայն կը սպառէին Հայաստանի մէջ, այլ նաեւ կը յորձորձուին Հայաստանի մէջ ալ:

«Հայաստանում պատրաստուող կաշուեղէնը շատ յարգի էր մաքուր երկրի սահմաններից դուրս. նրա վերաբերեալ գովասանքով է խօսում կայսր Կոստանդին Ծիրանածիւր եւ յիշատակում է, թէ բիզանդական արքունիքում էլ հայկական կաշուեղէնը գործածւում էր» (Բարկէն Առաքելեան, «Քաղաքները եւ Արհեստները Հայաստանում IX-XIII դարերում». Երևան, 1958, էջ 298):

Ակադեմիկոս-գիտնական Առաքելեան կը հաստատէ նաեւ որ ԺԹ. դար Հայաստանի մէջ «կոշկալարը ինքն էլ մշակում էր կաշին» (նոյն տեղը): Այլ խօսքով, կոշկալարը էր նաեւ խաղախորդ (տապալի):

Տակաւին լսենք Առաքելեանը. —

«Կոշկալարները համալսմբում էին եւ բոլոր քաղաքներում գրադեցնում էին առանձին փողոց կամ քաղափա: Անի-Ուր (այս քաղաքում մերն է) այդ քաղափա կոչւում էր Կոշկալարոց, որն յիշատակւում է 1251 թ. մի արձանագրութեան մէջ» (նոյն տեղը):

Շատ հաւանականօրէն, ուրեմն, ԺԱ. դարուն վերջերը Չնքուչը հիմնող մեր նախահայրերը Անիի Կոշկալարոց թաղէն էին:

Մեր այդ կոշկալար-խաղախորդ նախահայրերը Չնքուչի հիմնորդի օրերէն իսկ հաստատուած են այնտեղ կաշեգործութեան կամ խաղախորդութեան արհեստը եւ սերունդէ սերունդ գալիս իրենց յաջորդներուն փոխանցելով, ոչ միայն դարերով

5. Արհեստ մը կամ արուեստ մը մէկ գերդաստանի եւ կամ մէկ զիւղի ու զիւղաւանի մեծաշնորհ դարձնելը եւ զայն սերունդէ սերունդ փոխանցելը մինչեւ Ի. դարու սկիզբը սովորական երեւոյթ մըն էր Արեւելքի մէջ: Ես գիտեմ Երրոյ գաւառի Ալօշի զիւղախմբին մէջ զիւղ մը, Պաքիթան, որուն բոլոր քուրմ բնակիչները վառօդաւորած էին: Անոնք վառօդաւորութեան զգալիքը միայն իրենց զիւղին մէջ կը պահէին: Այդ զիւղին մեծաշնորհն էր դարձած բոքակով (կիւկերճիւ) ընտիր վառօդ պատրաստելը: Պաքիթանցիներու պատրաստած վառօդը չէր զիջեր նոյնիսկ Անիլիային ներածուած վառօդին՝ իր որակով: Անոնց պա-

զոհացուցած են կաշուեղենի պիտոյքը խորհրդի ու Տիգրանակերտ նահանգներում բոլոր քաղաքներում եւ գիւղերում բնակչութեան, այլ հետազոյին հիմը դրած են կաշիի այն լայնատարած վաճառականութեան, որ ժամանակակից Չընքուշինն էր:

Այս իրողութիւնը կը փաստուի նաեւ անով, որ Չնքուշի շատ մը հին տուններուն ներքնայարկերը մէյմէկ փոքր խաղախորդարաններ էին⁶, զետնին մէջ թաղուած քաղաքներով (տապաղի ջրաւազան), ուր կը մշակէին անհատ կօշկակարները իրենց մանր կաշիները:

Չենք ուզեր մտնել աւելի մանրամասնութեան մէջ: Սակայն հարկ կը տեսնենք աւելցնելու, թէ չնքուշիները դարերու ընթացքին զարգացուցած էին կաշեգործութեան արհեստը աւելի քան որ այն գոյութիւն ունեցած էր Անիի կամ Հայաստանի մէջ Թ-ԺԳ. դարերուն:

Բ. Առաքելեան մանրամասնորէն կը նըկարագրէ անեցիներու կամ առհասարակ Հայաստանցիներու կաշիի մշակութիւնը.

«Ամէնից առաջ ստացուած չոր կաշին քոչոց էր դրուում եւ փերում ներսի կողմից՝ մետաղէ փերիչի օգնութեամբ, այնուհետեւ հեռացուում էին կաշուի վրայի մազերը կրի օգնութեամբ (կաշին կամ դրուում էր կրաքրի մէջ կամ նրա վրայ փնում էր չլանգած կրի մածիկը (նուրբ կաշիները): Կիրը տալուց եւ մազերը հեռացնելուց յետոյ կաշին լուացուում էր եւ աղաքի մէջ դրուում, լուացուում գցուում էր ալիւրի քեփից պատրաստուած շփոթի մէջ եւ նորից լաւ փերում: Դրանից յետոյ կաշին դաքաղուում էր: Գործածուել են մի շարք դաքաղող նիւթեր, ամենից աւելի գոթորը եւ աղթորը (սումալ): Բացի այս հիմնական դաքաղող նիւթերից, օգտագործուել են բաղիկը (սա ուժեղ դաքաղող նիւթ է, ուստի գործածուել է հաստ կաշիների համար), բնկալի պտղի կանաչ կեղեւը, շագանակի պտուղները, խաղողի կորիզները եւ նուա՛ն կեղեւը» (Անդ, էջ 296-297):

Կը տեսնենք, որ Առաքելեանի այս (եւ

այլք, զորս մենք զանց բերնք) նկարագրութեան մէջէն կը բացակայի չան փինը: Կաշին թռչողէն հանելէ, քերելէ եւ մաշելէ հետոյ (որուն համար չընքուշիներ կիրէն դատ տեղական հանքային կաւ մ'ալ կը գործածէին), կ'օգտագործուէր նաեւ փինը՝ կաշին կակղցնելու համար: Ինչպէս կիրը եւ դաքաղելու դեղերը (չնքուշիներ դեղ կ'ըսէին այդ նիւթերուն), փինն ալ կը հաւեցուէր քաղաքներու (ջրաւազան) մէջ, ուր կը ձրուէին կաշիները բոլոր պրոցէսներուն ալ: Իւրաքանչիւր պրոցէս իւրաքանչիւր թաղարն ունէր: Կաշին տապաղելու թաղարը ձգուելէն յետոյ, ամիսներով կը մնար այստեղ, պայմանաւ որ ժամանակ տա ժամանակ խառնուէր թաղարը, վարպետօրէն դեղը կաշիին մէջ տեղաւորելու համար հաւասարապէս: Այդ գործողութիւնը կը կոչուէր համալշտանը խառնել:

* * *

Կարելւոր հանգամանք մ'ալ, որ օգնած է Անիէն զաղթող խաղախորդ-կօշկակարներուն Չնքուշի վայրն ընտրելու իրենց բնակատեղի եւ հոն հաստատուելու կաշե-

արաստած վառօգէն բոլոր մը կրնայիք զննել անիւ մէջ, լուցկիով մը պայթեցնել, առանց սեւ րծի հետք մ'անգամ թողելու ձեռքի մէջ: Այս իրողութեան ծանօթացայ, երբ հայրս, որ առեւտուրի մէջ ամէն տեսակ վաճառքի ձեռք կը գործէր, Մալաթիայէն բեռներով բորակ եւ ծծումբ զննելով՝ այդ գիւղացիներուն վառօգ պատրաստել տուաւ:

6. Մեր տունը, որ մեծ հայրս զնամ էր՝ Չընքուշին 1840ական թուականներուն զաղթող ընտանիքէ մը, ներքնայարկը ունէր նման խաղախորդարան մը: Այդ պատճառով առատ ջուր կը հոսէր մեր ներքնայարկէն բացուած առուէ մը: Պէտք է բռնել, թէ Չնքուշի մէջ ջրհոր կամ ջրի ալ գոյութիւն չունէր, խմելու ջուրն անգամ ժամ մը հեռաւորութենէ կու գար քաղաքէն փողրանքներով (փողրակ): Մեր տունէն 10 քայլ հեռու Գասապից աղբիւրին ջուրը ստորերկրեայ փողրակներով բերուած էր մեր տան ներքնայարկը, ինչ որ ցոյց կու տայ, թէ դարերու պատմութիւն ունէր այդ խաղախորդարանը:

գործութիւնը, այն էր, որ Չնքուշի իր շրջակայքով առատօրէն ունէր խաղախորդութեան անհրաժեշտ բոլոր նիւթերը - զղթոր, աղթոր (աղտոր-տեքիւ կ'ըսէին չնքուշիք), խաղողի կորիկ, նոսն կեղեւ, փայտէ կրակի մոխիր: Նմանապէս հանքային կաւ, երկու տեսակ, մէկը կարմիր, միւսը սեւ, որոնք Չնքուշի շատ մօտիկ արուարձաններու մէջ կը գտնուէին: Չնքուշին ժամ մը հեռաւորութեամբ, խաղախորդարանէ, Եփրատի եզերքը կար յատուկ նուաստան մը: Չնքուշի մէջ նուա՛ն կեղեւն էր յարկի, ո՛չ հատիկը: Իսկ յայնկոյս Եփրատի կային գիւղեր, որոնք իրենց տարեկան ապրուստը անտաններէն, մասնաւորապէս Ատիլի գիւղացէն՝ զետի արեւմտեան եզերքին տարածուող իւրաքանչիւր ձառանցիի անտանէն զղթոր եւ նշանաւոր Հատանցիի անտանէն զղթոր տեքիւ հաւաքելով ու վաճառելով կը հանէին: Հարկ կա՞յ բռնել, թէ չնքուշի մի քանի աղքատներ ալ փողոցներէն փին հաւաքելով եւ քէնէֆէ (թիթեղ) ներով վաճառելով կ'ապրէին:

Նոյնիսկ խորհրդի, Սեւերակի եւ այլ վայրերու մէջ խաղախորդարաններ հաստատուելու համար չնքուշիներ այդ տարող եւ բանեցնող չնքուշիներ այդ դեղերը Չնքուշին կը ներածէին ջրի թեւերով, մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը:

* * *

Ամփոփենք:

ԺԱ. զարու վերջերը, եօթն ամիս տեւող (995 թ.) երկրաշարժներէն քանդուած Բնարեղ-ընդեղի աւերակոյտին վը-

րայ, Եփրատի (Չնքուշ) կերտող Անեցիները կաշեգործներ (խաղախորդ-կօշկակար) էին:

Անոնք, օգտագործելով Չնքուշի անմիջական շրջակայքը գտնուած անհրաժեշտ նիւթերը, հիմնած են խաղախորդարան եւ զարկ տուած կաշեգործութեան իրենց արհեստին:

Չնքուշիները դարերով իրենց մենաշնորհը դարձուցած են խաղախորդութիւնը եւ իրենց հասցուցած (մշակած) կաշիները արտածած են մօտաւոր եւ հեռաւոր քաղաքներ: Սերունդէ սերունդ փոխանցուելով արհեստին գաղտնիքները, մինչեւ ԺԸ. դարու վերջը խաղախորդութիւնը մնացած է Չնքուշի մէջ միայն:

ԺԹ. դարուն, երբ թուրք կառավարութիւնը յաջողած է վերջ տալ Չնքուշի Պէյլիքեան եւ սկսած է կանոնաւոր հալածանք տեղւոյն հայութեան դէմ, չընքուշի 500 արհեստաւորներ զաղթած են ընտանեօք այն վայրերը, ուր տարւոյն 7-8 ամիսները կը գործէին իրենք եւ իրենց նախահայրերը դարերով: Խորհրդ, Սեւերակ եւ այլ քաղաքներ զաղթողներ հիմնած են այդտեղերը խաղախորդարաններ: Սակայն մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը Չընքուշը կը մնար որպէս կեղրոն խաղախորդութեան եւ կաշիի վաճառականութեան:

Ահա՛ թէ ինչո՞ւ համար կաշին հոմանիշ էր դարձած Չնքուշին եւ կաշեգործը՝ չնքուշիին:

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ